ՍՊԻՐՈՄԵՏՐԻԱ

ՀՈՒՇԱԹԵՐԹԻԿ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

WIGMORE

Ի՞ՆՉ Է ՍՊԻՐՈՄԵՏՐԻԱՆ

Սպիրոմետրիան հետազոտություն է, որի միջոցով ստուգվում է երեխայի թոքերի տարողությունը, ինչպես նաև ներշնչման և արտաշնչման արագությունները:

Ի՞ՆՉՔԱՆ Է ՏԵՎՈՒՄ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ

Հետազոտությունը կարող է տևել 20-60 րոպե կախված երեխայի՝ հրահանգները ճիշտ կատարելու կարողությունից:

Ի՞ՆՉՊԵՍ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ

Սպիրոմետրիան իրականացվում է սպիրոմետր կոչվող սարքի միջոցով: Այն կազմված է բերանի համար նախատեսված մուշտուկից և խողովակից, որը միանում է համակարգչին:

Երեխան հետազոտությունն անցնում է նստած կամ կանգնած դիրքում:

Քանի որ հետազոտության ժամանակ երեխան պետք է կատարի բժշկի հրահանգները՝ խորը շունչ քաշել, ուժեղ փչել, ապա հիմնականում այս հետազոտությունը կարողանում են իրականացնել 5 տարեկանից բարձր երեխաների մոտ:

Ե՞ՐԲ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ՍՊԻՐՈՄԵՏՐԻԱՆ

Սպիրոմետրիան նշանակվում է, երբ պետք է

- ախտորոշել և վերահսկել թոքերի որոշ հիվանդություններ (օրինակ՝ ասթմա, ցիստիկ ֆիբրոզ),
- գտնել հազի, խզզոցների և դժվարաշնչության պատճառը,
- վիրահատությունից առաջ ստուգել թոքերի ֆունկցիան,
- ստուգել սպորտով զբաղվողների թոքերի կենսական տարողությունը:



Ի՞ՆՉՊԵՍ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ

- Խուսափե՛ք մեծ քանակի սննդի ընդունումից հետազոտությունից 2 ժամ առաջ:
- Դադարեցրե՛ք մշտական և ըստ կարիքի ընդունվող դեղորայքը: Հստակ ժամկետները պետք է ճշտել բժշկից. օր.՝ Սալբուտամոլը ցանկալի է դադարեցնել հետազոտությունից առնվազն 4 ժամ առաջ:
- Խուսափե՛ք ֆիզիկական ծանրաբեռնվածությունից հետազոտությանը նախորդող 30 րոպեների ընթացքում:
- Կրե՛ք հնարավորինս թեթև, կրծքավանդակի շարժումները չսահմանափակող հագուստ:
- Մի՛ ծխեք հետազոտությանը նախորդող 1 ժամվա ընթացքում:
- Մի՛ օգտագործեք ալկոհոլ հետազոտությանը նախորդող 4 ժամերի ընթացքում:

Ե՞ՐԲ ԵՆ ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆՈՒՄ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Սպիրոմետրիայի եզրակացությունը տրվում է անմիջապես հետազոտության ավարտից հետո:

ԿԱ՞Ն ՀԱԿԱՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Սպիրոմետրիան ապահով և անվնաս հետազոտություն է, սակայն որոշ իրավիճակներում այն խորհուրդ չի տրվում իրականացնել, օր.՝ վերջերս տարած վիրահատությունից հետո կամ սրտի ծանր հիվանդությունների ժամանակ:

ՈՒԻԳՄՈՐ՝ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ, ՈՐ ՍԻՐՏ ՈՒՆԻ...



WIGMORE